

33

ԱՐԽԱԶԻԱՅԻ Ա. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂՅՈՄ

**ԳՐԱՎՈՐԻ, ԸՆԹԵՐՑԱՆՈՒ-
ԹՅԱՆ ՅԵՎ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ
ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԳԱ-
ՎՈՐՈՒՄԸ ՏԱՐԱԿԱՆ
ԴՊՐՈՑՈՒՄ**

ՀԱՅԿԻՍՏԱՆԻ
ԼԻՏԵՐԱԿԱ
ԲՐԱՏՈՒՆԱԾԵՐՈՒ
ԱՆԴՐԱՏՈՒՄ ԽԱՅԻ
ՍՍՏՐ

(Մեթոդական վերլուծութիւն).

■ ■ ■

4

Գ-87

ՍՈՒԽՈՒՄ

1933 թ.

22.03.2013

33

34-K
Ua 1000

4

9-83

ԱՐԽԱԶԻԱՅԻ Ա. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂՅՈՍ

06 APR 2010

**ԳՐԱՎՈՐԻ, ԸՆԹԵՐՑԱՆՈՒ-
ԹՅԱՆ ՅԵՎ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ
ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԳԱ-
ՎՈՐՈՒՄԸ ՏԱՐԱԿԱՆ
ԴՊՐՈՑՈՒՄ**

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

(Մեթոդական վերլուծություն)։

ՍՈՒԽՈՒՄ
1933 թ.

»Постановка письма, чтения
и развития речи в начальной школе«
(методический анализ)



60070-66

ԳՐԱՎՈՐԻ, ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՏԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

(Մեթոդական վերլուծություն).

Դպրոցը, վոր հանդիսանում է սոցիալիզմ կառուցող-
մարտիկների նոր սերունդ պատրաստողը, նրանց ձեռքը
պիտի տա այնպիսի մի ուժեղ գեղեցիկ, վորպիսին է լեզուն:
Ուստի հենց ուսուցման առաջին աստիճանում, յերեխաների
մեջ պիտի զարգանա ու մշակվի ճշգրիտ արահայտիչ և
բազմակողմանի խոսակցական լեզու:

Լեզվագիտական աշխատանքի բոլոր ձևերը պիտի ուղ-
ղված լինեն այդ հարցին: Լեզվին տիրապետող աշակերտը
ավելի շուտ և հաստատապես է ըմբռնում դպրոցական ուսուց-
ման մյուս առարկաների ուսուցիչություններն ու գիտելիք-
ները: Այդ ուսուցման մյուս առարկաներն ել իրենց հերթին,
շարունակաբար նյութ են մատակարարում յերեխայի լեզ-
վի զարգացմանը:

Լեզվի վրա տարած աշխատանքի յերակետը հանդիսանալու
է յերեխաների կոնկրետ աշխատանքը.— ձեռքի աշխատանք,
հետազոտություն, դիտողություն բնության յերևույթների
վրա, փորձեր և այլն: Լեզվագիտական աշխատանքների
բոլոր ձևերը պիտի ուղղված լինեն յերեխաների բառա-
պաշարը բնորոշակելու և հարստացնելու վրա:

Լեզվի համար տարած վույժ աշխատանքը ավելի կամ
պակաս հեշտությամբ կապվում է ուսուցման մյուս առարկա-
ների հետ: Բանավոր լեզուն հանդիսանում է ամբողջ դպրո-
ցական աշխատանքի հիմքը: Այդ աշխատանքի վույժ մի տե-
սակը չի կարող գոյություն ունենալ առանց բանավոր լեզ-
վի:

Բայց այստեղից չպետք է ճեղքալույսներ, վոր բանավոր
լեզուն կարիք չի գգում վարժությունների համար առան-
ձին ժամեր հատկացնելուն: Ընդհակառակը, պիտի ոգտվել
ամեն մի առիթից, վորը աշակերտին կզնի անհրաժեշտու-
թյան առաջ ճիշտ կերպով արտահայտելու իր միտքը:

Ցածր դասարաններում բանավոր լեզվի վարժություն-
ների համար իբրև նյութ ծառայում են մանկական խա-

ղերը (յերեխաները առաջարկում են իրենց խաղերը և բացատրում, թե ինչպես պիտի խաղալ), պատկերները՝ վորոնց բովանդակությունը պատմում են յերեխաները, եքսկուրսիաները՝ վորոնց մշակման ժամանակ բրիգադները պատմում են, թե ինչ առաջադրանքներ են ստացել իրենք և ինչպես են կատարել այն, աշխատանքի աշխատանքների հաշվետվությունները, հանրագումար աշխատանքների հաշվետվությունները՝ վոր կատարել և տվյալ դասարանը մենակ կամ մյուս դասարանների հետ միասին:

Առաջին աստիճանի բարձր դասարաններում, ուր բանավոր լեզվից ոգտվելու կարողությունը համեմատաբար բարձր աստիճանի վրա յե գտնվում, աշակերտները գեկուցում են ևս անում առաջին աստիճանի մյուս դասարաններում հասարակագիտական թեմաների մասին, զանազան կամպանիաների, սոցիալականության պայմանագրերի և հարվածայինությունների աշխատանքներ կատարելու մասին և առհասարակ զանազան ընդհանուր-դպրոցական գործերի առթիվ:

Այդ դասարաններում դեպի ընթերցանությունը դիտակցական վերաբերմունք մշակելու համար՝ աշակերտների մեջ, վորոշ ժամեր են հատկացվում գրույցներին՝ կարդացած գրքերի առթիվ արտադասարանական (գրադարանային) ընթերցանության համար: Յերեխաները սովորում են համառոտակի պատմել առանձնապես իրենց գուր յեկած հոգվածները, գրքույկները և նրանցից ընտրություններ կատարել, թե վորը ավելի նշանակալից ե:

Գրավոր լեզվի տիրապետությունը ներկայացվում և հետևյալ ձևով: Այբբենական դասարանում, սկզբնական շրջանում, հարկավոր և նյութեր քաղել կոնկրետ շրջապատից.— մի վորեւե առարկա արտահայտող պատկերների տակ յեղած գրություններ, 2-3 բառից կազմված նախադասություններ, այս դեպքում պիտի բերել կարճառոտ բառեր, վորովհետեւ յերեխաների ակտիվ ուշադրության թույլ զարգացումը, կարող և նրանց սխալների մեջ գցել յերկար բառի յերկրորդ կեսում:

Աբբենական դասարանում, լավ կլինի նկարչական վարժություններ կատարել տալ գրավորից առաջ— շղթաներ, ողակներ ըստ Շառլոտինկովի դասադրքի: Այդ յերեխաների համար հետաքրքիր աշխատանքը վարժեցնում և նրանց ձեռքի մկանների նուրբ շարժումներն և այդպիսով նախապատրաստում նրանց գրավորի համար: Գրագիտության

ուսուցումը ամբողջական բառերի մեթոդով շատ համապատասխան նյութեր և տալիս գիտակցական գրավորի համար ուսուցման այդ աստիճանում:

2-րդ և 3-րդ ուսուցման տարում յերեխաները գրավորի նյութը քաղում են շրջապատի կյանքից և այդ շրջապատում իրենց ունեցած գործունեությունից. աշխատանքային պրոցեսներ, եքսկուրսիաներ, արտադրություն հետ ունեցած կապեր (վորին կցված և դպրոցը), մյուս դպրոցներին կամ դասարաններին սոցիալականության և հարվածայինության հրավերներ, դրանց կատարման հաշվետվություններ, 1-ին աստիճանի մասնակցությունը պատի թերթին և այլն:

3-րդ և 4-րդ դասարաններում գրավորի նյութը բավականաչափ ընդլայնվում և բարդանում ե: Ավարտված հոգվածների գրավոր կերպով ամփոփումը, 1-ին աստիճանի պատի թերթի համար հոգվածներ կազմելը, տարված կամպանիաների ավելի մանրամասն հաշվետվությունները, գործնական թղթեր կազմելը, դասարանական ժողովների ավելի մանրամասն արձանագրությունները, բնագիտության, հասարակագիտության դասերին յուրացված նյութերի նկարագրությունները և այլն:

Գյուղական դպրոցների 3-րդ և 4-րդ դասարանների աշակերտները հանդիսանում են գյուղական բնակչության ավելի գրագետ մասը: Այդ նրանց պարտավորեցնում և մասնակցություն ցույց տալու իրենց գյուղի կուլտաշխատանքների մեջ, դպրոցում ձեռք բերած գիտելիքները կիրառելով այդ գործում: Շատ գրավոր աշխատանքներ կրդտնվեն նրանց համար խրճիթ-ընթերցարանում, կարմիր-անկյուններում, լիկկայանների աշխատանքները հաշվառման վերցնելու գործում և այլն:

Այսպիսով գրավորը ներկայանում և վոչ թե ինքնագվարժության համար ինքն իր մեջ փակված դպրոցական աշխատանք, այլ հանդիսանում և վորպես մի կապող ողակ վոչ միայն դպրոցական սուսուցման բոլոր առարկաների, այլ և յերեխաների շրջապատի կյանքում ունեցած ամբողջ գործունեության մեջ:

Այդպիսի կապ պիտի պահպանել ուսուցման մյուս առարկաների հետ նաև լեզվի վրա կատարած գիտողությունների ժամանակ, վորտեղ չպիտի կրկնել հին դպրոցի քերականության սխալները, վոր տառապում եր յուրահա-

տուկ չորութեամբ և տեսականորեն կտրված եր գործնականից ու յերեխաների ուղեղին անմատչելի:

Այժմյան դասագրքերում շատ բան է արված այդ դեֆեկտները ծածկելու համար: Բայց և այնպես, յեթե ուսուցիչը բոլոր առաջադրված նյութերը սկսի անցնել այն կարգով, վորով նրանք դասավորված են դասագրքում, ապա ունակութեանների և լեզվական դիտողութեանների վրա տարված աշխատանքը նրան կարող է շեղել, անկասկածորեն, ուսուցման մյուս առարկաներից և կտրել կապը կենդանի շրջապատի հետ. ուսուցիչը պիտի խուսափի լեզվական դիտողութեաններ կատարելու համար ամբողջականից կտրված որինակներ բերելուց: Այբբենականները վերադառնում են աշխատանոցից, ուր գործ էլին ունեցել ձյութի հետ: Այստեղից հետևանք.— կեղտոտ ձեռքեր և նրանց լվանալու անհրաժեշտութեան: Նրանց գրավոր աշխատանքը լինելու չէ.— «Ձյութ: Ձեռքերդ լվա», Բառեր «ձ»-ով:

Կարող է պատահել, վոր այդ տառը գրել և կարգացել են մինչ այդ, բայց նրան յուրացնելու կարողութեանը ձեռք է բերվում մի շարք վարժութեաններից հետո:

Ոգտակար է մի ավելորդ անգամ ել համեմատել բառերը «ձ»-ով և «ծ»-ով, թե չե աշակերտները կարող են շփոթել այդ հնչյունները և գրել «ծեռ»:

Առաջին դասարանի աշակերտները բնագիտության դասին ծանոթացել են սերմերի նշանակության մասին, կազմում են կուլտուրական մշակույթների և վայրի բույսերի սերմերի կուլիկցիա, իրենց կուլիկցիայի աշխատանքներում գրի յեն անցնում իրենց կատարածները, վարժութեաններ են անում միջակետի, բուլի և ստորակետի տեղին գործածութեան համար՝ սերմերի անունները թվելու ժամանակ,

«Մշակույթի բույսերի սերմերն են՝ վարունգի, բողկի կաղամբի . . . սերմերը. վայրի բույսերի սերմերն են ավելուկի, թրթնջուկի, կատվականի . . . սերմերը»:

2-րդ դասարանում աշակերտները ծանոթանում են թե ինչպես են ապրում կոմյերիտները բուրժուական յերկրներում և մշակելով համապատասխան մի հողված դասագրքից՝ միաժամանակ դիտողութեան են կատարում լեզվի կազմութեան վրա, (վորով գրված է այդ հողվածը) առողանութեան նշանների մասին՝ ուրիշի խոսակցութեան ժամանակ:

3-րդ և 4-րդ դասարաններում լեզվի վրա կատարած դիտողութեանները շատ ընդարձակ են լինելու: Մի քանի դեպքերում լեզվի վրա կատարած դիտողութեանները մյուս առարկաների և յերեխայի կենդանի շրջապատի հետ կապելը շատ դժվար կլինի:

Այնուամենայնիվ ուսուցչի ամբողջ ուշադրութեանը պիտի ուղղված լինի այն բանին, վոր կարելու չէ չափ խուսափի տեսականացումից և «դատողութեաններից» և ավելի շատ վարժեցնի աշակերտներին բառերի համաձայնեցման ու տեղին գործածման, նախադասութեանների կազմելու և նրանցից մի կապակցական լրիվ միտք ստեղծելու շուրջը: Այժմյան դասագրքերն ընդարձակ նյութ են տալիս ինքնուրույն աշխատանքների համար, վորոնք ամբասնդում են աշակերտների մեջ ուսուցչի հետ միասին դասերի ժամանակ մշակած նյութերը: Այդ նամանավանդ գնահատելի յեն այն դպրոցների համար, ուր մեկ ուսուցչի վրա ընկնում է յերկու դասարան (գլուղական դպրոցներում):

Ուղղագրական ունակութեանների ձեռք բերումը սկսվում է հենց առաջին բառի հետ, վոր գրում է այբբենականի աշակերտը: Ունակութեանը մի պայմանական (այսինքն մշակած, ձեռք բերված) ռեֆլեկս է, այսինքն այնպիսի մի գործողութեան, վոր հաճախ կրկնելու միջոցով դառնում է ավտոմատիկ, յուրացվում է առանց կամքի ու ժգործադրելու:

Ուղղագրական ունակութեանը նույնպես մի պայմանական ռեֆլեկս է, միայն բարդ, մի քանի մոմենտներից կազմված, վորոնք հաջորդական կարգով կրկնողութեան հետևանքով, սերտ կապով միացել են միմյանց և յուրացվում են մի մի հպումով:

Ուղղագրական ունակութեանը առաջնապես գործում ոժանդակիչ դեր են խաղում տեսանելիքը և լսելիքը, վորպես արտաքին գրգռիչ որդաններ, գլխի, ուղեղի կենտրոններ (տեսողական, լսողական կենտրոն, կապակցական, լեզվաշարժողական, ձեռքաշարժողական) և, վերջապես, ձեռքի շարժումը՝ գրգիռ առաջ բերող ռեակցիա (կատարածու): Գրել սկսողը դիտում է գրած կամ տպագիր բառը: Տեսողական գրգիռը անդրադառնում է տեսողական կենտրոնին, Առաջ է գալիս բառի տեսողական պատկերը: Տեսողականից ճանապարհ է բացվում դեպի լսողական կենտրոն — բառը արտասանվում է. այստեղից անցնում է գիտակցութեան

կեներոնին, ստացվում է առարկայի մտապատկերը, ապա տեղի յե ունենում բառի արտասանութիւնը՝ բարձրաձայն կամ շշուկով, և վերջապէս նրա պատկերավորումը:

Սկզբնական ուսուցման ժամանակ այդ ճանապարհների ընթացքը, գրգռումից դեպի գործողութիւն կատարումը, տեղի յե ունենում դանդաղ կերպով կամքի ուժ գործադրելով: Բայց յուրաքանչյուր նոր կրկնութիւնից, այդ գործողութիւնը կատարվում է ավելի շտապ և հեշտ, և վերջապէս դառնում է ունակութիւն:—գրգիւրը առաջ է բերում կատարում, կարծես զանց ագնելով մնացած միջանկյալ մոմենտները:

Գրավորի տարբեր տեսակների ժամանակ կենտրոնական ուղիների հաղորդակցութիւն կարգը միքիչ ձևափոխվում է, կախումն ունենալով զրգուիչներից. արտագրելու ժամանակ տեսանելիքը թելադրութիւն ժամանակ—լսելիքը, անգիր գրելու ժամանակ—կամքի հրումն: Ուստի գրավորի յուրաքանչյուր տեսակը առանձին վարժութիւններ է պահանջում: Ուղղագրական ունակութիւնների մշակումը, ինչպես արդեն ասված է, սկսվում է հենց առաջին բառից, վոր արտագրում է յերեխան: Վոչ մի բառ չպիտի գրվի առանց ուսուցչի հսկողութիւն: Ուսուցումը պիտի սկսել այնպիսի բառից, վորոնք գրվում են այնպես, ինչպես արտասանվում են: Հետո գրվում են այն բառերը, վորոնց արտասանութիւնը տարբերվում է գրավոր ձևից:

Այդպիսի բառերի ուղղագրութիւնը յուրացվում է հաճախ կրկնութիւն ընթացքում: 1-ին դասարանում ուսուցման մեթոդը մնում է նույնը:—Ուշագիր դիտողութիւն այն բառերի ուղղագրութիւնը, վորոնք գրավորի մեջ մասամբ չեն համապատասխանում արտասանութիւնը, աշակերտների ուժին համապատասխան բացատրութիւն տալ պատճառների մասին, գիտակցական արտագրութիւն:

Ոգտակար է աշակերտների մասնակցութիւնը կազմել «գծվար» բառերի աղյուսակներ և կախել պատին:

Դիտակցական արտագրութիւն նշանակութիւնը ուղղագրական ունակութիւններ ձեռք բերելու մեջ, ժամանակակից մեթոդիստներն ոգտակար են համարում առաջին աստիճանի բոլոր դասարանների համար, վորովհետեւ աշակերտը այդ դեպքում իր աչքի առաջ ունենում է մի միայն անսխալ տեքստ, նրա ձեռքն ու աչքերը վարժվում են միայն ուղիղ և անսխալ գրելու մեջ: Բայց, իհարկէ, վորքան բարձր

է դասարանը, այնքան ավելի ժամանակ պիտի հատկացնել ավելի բարդ և ինքնուրույն աշխատանքներին (մանավանդ 3-րդ և 4-րդ խմբերում):

Չի բացառվում նաեւ թելադրութիւնը իր տարբեր ձևվերով:—Նախազգուշացրված, ստուգողական, ինքնաթելադրութիւն (անգիր գրելը): Թելադրութիւն համար անթույլատրելի յեն առանձին նախադասութիւնները, ամեն անգամ պիտի տալ ամբողջական կապակցված նյութեր: Գործադրվում է նաեւ ազատ թելադրութիւն, վորը լավ կլինի կիրառել 3-րդ և 4-րդ դասարաններում, ինչպես և արվելու յե ստուգողական թելադրութիւնը: Ազատ թելադրութիւն ժամանակ, վորի բովանդակութիւնը նախապէս մշակված պիտի լինի ուղղագրութիւն տեսակետից, չպիտի թելադրվի առանձին նախադասութիւններով, այլ աշակերտները պիտի գրեն այն հիշողութիւնը, միայն թե չպիտի ներկայացնեն նախադասութիւնների միտքը: Ազատ թելադրութիւնը վերածվում է ստեղծագործականի, յերբ այդ դրութիւնը նախապատրաստական աշխատանքից հետո իրավունք է տրվում աշակերտներին նախադասութիւնների դասավորութիւնը փոփոխութիւն յենթարկելու, նաեւ փոփոխելու պլանը և կարգացածի բովանդակութիւնը:

Անհատական գրավոր աշխատանքները լավ կլինի սկսել 2-րդ դասարանի 2-րդ սեմեստրից: Այդ ժամանակաշրջանում յերեխաների համար արդեն գոյացած կլինի ուղղագրական ունակութիւնների մի ամբողջ կոմպլեքս, վորին նպաստած կլինի լեզվի վրա տարած դիտողութիւնների բավականաչափ ընդարձակ շրջանը: Ծրագրի մեջ ցույց են տրված անհատական աշխատանքների տեսակները 1-ին աստիճանի բարձր դասարանների համար:

Այդ դասարանների աշակերտները պիտի բովորեն ոգտվել ուղղագրական բառարաններից: Ուղղագրութիւն ուսուցման դժվար մասը կայանում է սխալներն ուղղելու մեջ: Այդ հարցի առթիվ ժամանակակից մանկավարժների մեջ գոյութիւն ունեն տարբեր կարծիքներ: Կան նույնիսկ այնպիսիները, վորոնց կարծիքով՝ «ամեն տեսակի ուղղումն արմատացնում է անգրագիտութիւնը:

Ուղղումն ստեղծում է բառի կրկնակի պատկերացում՝ սխալի և անսխալի, և գրանով արդելը դառնում ուղղագրական ունակութիւնների կատարման աշխատանքին»:

Թույլատրվում է միմիայն սխալ բառը ամբողջովին ջնջել սեպհանի և վերելից գրել ուղիղ ձևով:

Հանձնարարվում է կատարել այդ ըստ հնարավորության զգուշութեամբ, վերաբերել աշակերտի աշխատանքը չկեղտոտվի ու չփչանա:

3-րդ և 4-րդ դասարաններում թույլատրվում է ընդգծել գունավոր մատիտով սխալ գրված ամբողջ բառը: Ապա գրավոր աշխատանքների ուղղումների ժամանակ ուսուցիչն ասում է «գտե՛ք „աշակերտ“, բոռը: Ո՞ւմ տետրում ընդգծված է այդ բառը: Խնչո՞ւմ է քո սխալը»:

Վերոմիետե ասյդ բառը գրավոր աշխատանքի ժամանակ արտասանվել է ըստ վանկերի կամ գրվել գրատախտակի վրա (տառասխալները տեղում են միջև 2-րդ աստիճանը), աշակերտն իսկույն գտնում է իր սխալը և այստեղ և ետ վերականգնում բառի անսխալ պատկերացումը, գրելով այն մի անգամ «սխալների ուղղում» վերնագրի տակ: Հաճախ կրկնվող սխալները պիտի հավաքել, և կազմել հատուկ գրավոր աշխատանք դժվար բառերի համար: Յաճախ դասարանների գրավոր աշխատանքները (այբբենական և 1-ին դասարաններում) ուղղվելու յեն դասարանում: Ուսուցիչը ուղղում է սխալները հենց գրավոր աշխատանքի ընթացքում շրջելով դասարանը:

Բարձր դասարանների ավելի ընդարձակ գրավորները հարկավոր են ուղղել տանը: Վերջան քիչ ժամանակ կրվածանվի գրավոր աշխատանքների կատարման և նրանց սխալների ուղղումների միջև, այնքան ավելի ազդեցիկ կլինի աշակերտների համար՝ իրենք իրենց սխալներն ուղղելու ժամանակ: Սխալ գրելու մտապատկերը դեռ հաստատուն կերպով չի բնավորվել նրանց կենտրոններում և ուղղումները հեշտութեամբ նպաստում են նրա անհետացմանը:

Ընթերցման ուսուցման ձևերը ներկայումս խիստ կերպով տարբերվում են հին դպրոցում գործադրվող, այսպես կոչված, «բացատրական» ընթերցումից: Տարրական գիտելիքները բնագիտությունից, աշխարհագրությունից, չեյին մոտում հին տարրական դպրոցի ծրագրի մեջ, ուր սովորեցնում էյին միայն գրել կարգալ և հաշվել: Վերոմիետե ասյն ժամանակվա աշխատավոր չքավոր դասակարգի յերեխաներն իրեց ուսումն ավարտում էյին տարրական դպրոցներում (հաճախ չեյին ել ավարտում), ուստի դասարանական ընթերցման համար դասագրքեր կազմողները, ցան-

կանալով մտցնել ուղղումներ, տարրական դպրոցի ծրագրի մեջ մտցնում էյին տարրական գիտելիքները խիստ հապճեպ կերպով, գիտելիքների տարբեր ճյուղերին վերաբերյալ տարբեր պարունակող՝ «ընթերցանության համար հողվածներ» անվան տակ: Այդ հողվածները կարգացվում էյին դասերին, մանրամասնորեն վերլուծվում, ըստ վորում, համարյա, ամեն մի բառ տեղիք եր տալիս ընդարձակ բացատրությունների մեջ ընկնելու: Յեթե դպրոցական պայմանները թույլատրում էյին, ուսուցիչները անհշան փորձեր էյին կատարում, ուր հրապարակ էյին բերվում անդիմանելու պատկերներ, իսկ աշակերտները մոտում էյին պատկեր հանդիսականների գերում վորպես լուկ նայողներ ու լսողներ:

Այգպիսով գիրքը ներկայանում եր «գիտելիքների» միակ աղբյուրը, վորոնք իրենց եյութեամբ հանդիսանում էյին լուկ խոսքեր, խոսքեր և խոսքեր:

Ներկայումս աշակերտները գիտելիքները ձեռք են բերում կյանքից. արտադրություն մեջ, աշխատանքի դասերին, կոլեկցիաներում աշխատելով, հետազոտելով այս կամ այն ձեռնարկությունները, անհատական մասնակցություն ցույց տալով այս կամ այն փորձերի կատարման մեջ: Գիրքը դարձրել է լուկ «ընթերցանության գիրք» լինելուց, բանավոր գիտելիքների աղբյուր ծառայելուց՝ նա դարձել է աշխատանքի գիրք: Նա ամբաստում է ընդարձակում է յերեխաների կյանքի բովից ձեռք բերած գիտելիքները, նա հրում է նրանց գեպի շրջապատող կյանքի աշխատանքը: Բնական է, վոր գրքի վրա տարվող աշխատանքի մեթոդն ևս պիտի փոխվի: Հին դպրոցի բանավոր ուղղությունը ուսուցչին ձգում եր, համարյա, նյութի յուրաքանչյուր բառի վրա, հատկապես աշխատանքի մեջ, վոր յերբեմն, հասցնում եր նրան հակառակ հետևանքների: Յեթե, որինակի համար, հասարակ ձեռվ կարելի յեր բացատրել «կայծառ» բառը, մանավանդ ցույց տալով այն աշակերտին, ապա համարյա անհնար եր լինում բացատրել «տպավորություն» բառը, դուրս կորգելով այն ծավալվող խոսակցություն միջից: Յեթե աշակերտը կարողանա ըմբռնել նախադասություն ընդհանուր միտքը, ուր նրան պատահել է այդ բառը, մանավանդ, յերբ նրան այդ բառը կհանդիպի մի ուրիշ անգամ ևս, ապա աշակերտի մեջ սկսում են հզանալ նոր հասկացողություններ: Ուսուցիչը ամեն կերպ աշխատելով հասկանալի դարձ-

ներ աշակերտներէ համար ընթերցանելիք նյութի բովանդակութիւնը, պիտի ավելի աշխատանք թափի կապակցական, արտահայտիչ լեզվի վրա, և վոչ թե առանձին բառերի բացատրութեան վրա:

Աշխատանքային գրքերում, ինչպէս և նախկին ընթերցանութեան գրքերում, կան գործնական և գեղարվեստական հոգւածներ: Այդ հոգւածների ընթերցման ձևերը միատեսակ չպիտի լինեն: Գեղարվեստական հոգւածները կարգացվում են առանց մասերի բաժանելու՝ ընդհանուրից ղեկի մասնավորը: Հակառակ դեպքում, կարող եւ տալովորութեան ամբողջութիւնը խանգարվել: Գործնական հոգւածները կարգացվում են մասերի բաժանելով՝ մասնավորից ղեկի ընդհանուրը: Աշակերտներն այստեղից համապատասխան յեզրակացութիւններ են դուրս բերում, ընդգծում են, վոր մի նոր բան սովորեցին, վորը չգիտէին մինչև այդ հոգւածի ընթերցումը, թեև աշխատել էին այդ հարցի շուրջը: Բայց չի կարելի մի ընդհանուր կանոն ստեղծել ընթերցման համար, վորովհետև հոգւածների բովանդակութեան մեջ կարող են լինել առանձնահատկութիւններ, վորոնք տարբեր մոտեցնումներ են պահանջում:

Նկարագրական հոգւածներն, որինակի համար, նույնիսկ յեթե նրանք լինեն գեղարվեստական, բայց ընդարձակ և բարդ իրենց իմաստով, կարող են նույնպէս կարգացվել մասերի բաժանելով՝ մասնավորից ղեկի ընդհանուրը, մասնավանդ, յեթե նրանք կարգացվում են առաջին աստիճանի դասարաններում, և դասարանն ընթերցանութեան մեջ թույլ եւ Բայց հետո, այդպիսի հոգւածը պիտի ամբողջովին կարգացվի ուսուցչի կողմից և յեթե հնարավոր եւ, պատմութեան աշակերտի կողմից նույնպէս ամբողջովին: Վոտանավորները սկզբից կարգացվում են ուսուցչի կողմից, տալով արտահայտիչ ընթերցման որինակ: Նրանց ընթերցումը մանուկներին պիտի տա գեղարվեստական պատկերներ և զգացմունքներ: Աշակերտների յերևակայութեան մեջ նկարվում են կարգացած պատկերներ:

Սովորական ընթերցման դասերը, զանազանակերպութեան համար, պիտի կարգացվեն մտքի մեջ, վորի ժամանակ տրվում են վորոշ առաջադրանքներ.— ընտրել հոգւածի մեջ այս կամ այն կտորը, գտնել այս կամ այն հարցի պատասխանը, գիտողութիւններ անել լեզվի կազմութեան վրա, և այլն:

Կարելի չե անցկացնել սկզբից նախապատրաստած հոգւածների ընթերցում, վորոնք լրացնելու յեն մի վորևե հարցի մասին աշակերտների արդեն ունեցած տեղեկութիւնները: Համապատասխան հոգւածը նախապատրաստման համար տրվում եւ ամբողջ բրիգադին, վորը ինքը նշանակում եւ, թե ով յուրաքանչյուր իր անդամներից ինչ պիտի կարդա: Ապա լսողները հայտնում են, թե ինչ նոր բան իմացան այդ հոգւածից, և գնահատական են տալիս բրիգադի կողմից իմաստալից և արտահայտիչ ընթերցման համար:

Գրքի նշանակութիւնը՝ վորպէս գիտելիքների լրացուցիչ աղբյուր, և III ու IV դասարանների համար ինքնուրույն աշխատանքի միջոց, քանի գնում աճում եւ Հետագայում կցվում են ընթերցման դասերի որինակելի պլանները:

1. Հոգւած „Միջատները վնասարարներ են“ (Չրդ դասարան): Հոգւածը կարգացվում եւ՝ կոոպերատիվային բանջարանոցում, պտղատու այգում, դպրոցական հողամասում—այգու և բանջարանոցի վնասարարների հետ մանուկների ծանոթանալուց հետո:

Հոգւածը սկսվում եւ մի շարքի հարցերով: Մանուկները կարդում են առանձին հարցերը և տալիս են նրանց պատասխանները:

Հոգւածի հարցը. „Ո՞վ ե խնձորի ներսը ծակոտել“: Մանուկների պատասխանը. „խնձորենու ճիճուն“: Հարց „Ո՞վ ե խնձորենու տերևները կրծոտել“: Պատասխան. „խնձորենու թրթուր“ (հետագա նման հարցերը բաց են թողնվում):

Իսկ ինչ են ներկայացնում իրենցից այդ փաստարարները: Այդ մենք ձեզ չենք ասի, նկարագրեցեք ինքներդ վնասարարներին: Մանուկները գրքերը փակում են և սկսում նկարագրել փաստարարներին, վորոնց նրանք տեսել և ճանաչում են: Ապա մանուկները շարունակում են ընթերցումը, ուր նկարագրված ե այն, ինչ վոր նրանք գիտեն փաստարարների մասին:

Աշխատանքներ՝ վորոնք բղխում են հոգւածի մշակումից. 1) Նկարներ: Խնձոր և աճ՝ վորդի ծակոտած անցքերով: Վոլորված տերևներ—առաջացած թրթուրի աշխատանքից: Հարսնյակի վոստայնի մեջ փաթաթված խնձորենու տերևներ: Կաղամբի տերևներ՝ կերված կաղամբի թրթուրի կողմից: 2) Պիոներ-

Մանուկներէ կիսակատար նկարները շատ բան կտան իրենց հեղինակներին, շնորհիւ նրանց վառ յերևակայութեան:

Հոգիվածը նյութ ե տալիս առողջապահութեան մասին գրույցներ կազմելու համար.— Մութ նկուղ, թթու ծծապտուկ, բժշկութեան բացակայութիւն: Այդ նպատակով հոգիվածից կարելի յե ոգտվել և ավելի ուշ ժամանակ, հարկավոր յեղած դեպքում, փորովհետև նպատակահարմար կերպով մշակված նյութը խոր հետքեր ե թողնում մանկական հիշողութեան մեջ: Կրավորի դասին մանուկները կազմում են 4-6 նախադասութիւն, փորոնց յուրաքանչյուրի բովանդակութիւնը արտահայտում ե աղջիկների կյանքի փորեն կողմը:

Քերականութիւնից.— բարդ բառերի կազմութիւնը.— գործարանատեր, մանածագործ. իգական սեռի վերջավորութիւնը հայոց լեզվի մեջ.— գործարանատիրուհի, մանածագործուհի և այլն:

III. Վոտանավորի ընթերցումը — «Խորհրդային դպրոցականներ»: Վոտանավորը կարդացվում ե դասարանում նախորոք ինտերնացիոնալ դաստիարակութեան մասին նախապատրաստական աշխատանք տանելուց հետո: Աշխարհագրութեան դասից մանուկներն արդեն գիտեն թե ինչ ազգութիւններ են բնակվում Ս. Բխագիայում, իսկ հասարակագիտութեան դասից իմանում են, փոր բոլոր ազգութիւնների յերեխաները դպրոցներում սովորում եյին ոտար լեզվով: Ինչպիսի դժվար պայմաններում են ապրում նեգրերի, չինացիների, հնդկիների յերեխաները ներկայումս: Աշխարհագրութեան դասերից մանուկները կիմանան, թե ինչպես են ապրում մեր խորհրդային Միութեան մեջ բազմաթիւ ազգութիւնների յերեխաները, փորոնց մասին աշակերտները իսկի լսած չեն: Ուսուցիչը թվում ե կիրգիդներին, սարթերին, գիլյակներին, ուղբեկներին և թեթե տեղեկութիւններ հաղորդում նրանց յերկրների առանձնահատկութիւններին մասին:

Այդ գիտելիքների հիման վրա յուրացվում ե վոտանավորը: Սկզբից վոտանավորը կարդում ե իներ՝


ուսուցիչը, փորից հետո աշակերտներն են կարդում մաս-մաս, տուն-տուն և պատմում կարդացածը:

Յեզրափակման գրույցի մեջ մանուկները դուրս են բերում քնահանուր հետևանքներ.— մեր խորհրդային միութեան ժողովուրդները. թե ինչպես նրանց յերեխաները ճանապարհորդում են դեպի դպրոցները: Զրույցը պիտի հասկացողութիւն տա աշակերտներին մեր Միութեան ընդարձակ տարածութեան մասին և նրա վրա բնակվող տարբեր ազգութիւնների մեծ քանակութեան մասին: Աշակերտների յերևակայութիւնը պիտի վառ կերպով պատկերացնի իրենց յեղբայրակից՝ խորհրդային փորրիկ դպրոցականների դեմքերը, փորոնք ճանապարհորդում են յեղջերունեքով, շներով, ուղտերով: Մանուկների մեջ պիտի անշ զան բավականութեան և բավարարութեան զգացմունքներ, թե ինչպես մեր հսկա Միութեան մեջ բոլոր աշխատավորների մանուկները ուսանում են դպրոցներում: Նյութը պիտի յեկան հանի ինտերնացիոնալ զգացմունքներ: Վոտանավորը տալիս ե բազմակողմանի նյութ գրավոր աշխատանքների համար: Կարելի յե գրել կենդանիների անունները, փորոնցով ճանապարհորդում են խորհրդային դպրոցականները ըստ վոտանավորի, լրացնելով նյութը այն կենդանիներով, փորոնցով ճանապարհորդում են մեզ մոտ—գոմեշներ, ջորիներ (կատերներ), յեղներ և այլն: Կարելի յե գրել այսպիսի տերներ, յեղներ և այլն: Կարելի յե ճանապարհորդում:

Վոտանավորը սովորելուց հետո կարելի յե աշակերտների ընտրութեամբ վոտանավորներից զանազան կուպլետներ տալ անգիր գրելու համար (ինքնաթելադրութիւն): Լեզվի կազմութեան վրա դիտողութիւններ անելու համար կարելի յե ընտրել շատ հոմանուն, հոմանիշ, նույնանուն բառեր: Գաղափար տալ ածանցների մասին՝ նախածանց, վերջածանց:

Կարիք չկա վախենալու, փոր վոտանավորը սովորելուց հետո, գրավորը, քերականական կանոնները կարող են սառեցնել աշակերտներին և ցրել նրանց յերևակայութեան մեջ առաջացած մտապատկերները: Այդ աշխատանքները տարվում են այն ժամանակ, երբ արդեն զեղարվեստական

99-01009



տպավորութիւնը ներգործել եւ, յերբ պատկերներն ու դեմ-
քերը լրիվ կազմվել են:

ԳՐԱՎՈՐ ՅԵՎ ԸՆԹԵՐՑՄԱՆ ԴԱՍԻ ՄՈՏԱՎՈՐ ՈՐԻՆԱԿԸ 1-ԻՆ ԽՄԲԱԿՈՒՄ:

Դասի թեման.—1) „Հրդեհը կոլխոզում“ պատմվածքի
ընթերցումը,

2) Բառերի արտագրութիւն

(3-րդ քառյակի վերջին և 4-րդի սկզբի աշխատանք):

Դասի նպատակը.— վարժութիւններ՝ ընթերցման
տեխնիկային տեղապետելու և կարգացածի բովանդակու-
թիւնը հասկանալու համար: Վարժութիւններ բառերի
վանկման համար (տողադարձ):

Աշխատանքի տևողութիւնը.— ընթերցում-1 ժամ
արտագրութիւն—1 ժամ:

Ի՞նչ պատրաստութիւններ պիտի տեսնել դասի համար.
կազմել ներածական զրույցի բովանդակութիւնը: Դուրս
գրել դժվար բառերը: Պատրաստել հարցեր պատմվածքի
համար: Պատրաստել գունավոր մատիտներ ընդհանուր ոգտա-
գործութեան համար: Պատրաստել տոմսակներ՝ բառերով և
առանձին՝ վանկերով: Նաև նախորոշել մանուկների կազմա-
կերպումը՝ աշխատանքի մեջ: Կազմել դասի պլանը:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ:

1. Ուսուցիչը անց ե կացնում մի համառոտ զրույց
„հրդեհը կոլխոզում“ պատմվածքի ընթերցման առթիւ, վոր-
պես նախապատրաստական աշխատանք: Առանձնապես աշա-
կերտների ուշադրութիւնն ուղղում ե դեպի կուլակների
դեմ տարվող պայքարը: Զրույցին զուգընթաց զրատախ-
տակի վրա գրվում են դժվարհասկանալի բառերը, վորոնք
հանդիպելու յեն պատմվածքի ընթերցման ժամանակ և հենց
այստեղ ել տրվում են այդ բառերի բացատրութիւնները
(5 րոպե):

2. Այդ նախապատրաստական զրույցից հետո, վորի նպա-
տակն ե հետաքրքրութիւն առաջ բերել մանուկների մեջ
դեպի պատմվածքի ընթերցումը և հեշտացնել նրա բովան-
դակութեան լրիվ յուրացման գործը, ուսուցիչն անցնում ե
ընթերցմանը: Ընթերցումը կատարվում ե մտքի մեջ (միայն

աչքերով)—ցածրաձայն ընթերցումն: Ընթերցման ժամանակ
ուսուցիչը շրջում ե աշակերտների մեջ, դիտում ե ընթերց-
ման ընթացքը, և անհրաժեշտ ոգնութիւն ե մատուցանում
թույլ աշակերտներին: Ուսուցիչը նախորոք պայմանավոր-
վում ե աշակերտների հետ և վորոշ նշաններ սահմանում,
վորոնք ցույց են տալու, թե աշակերտն ավարտեց ընթեր-
ցումը (5 րոպե):

3. Ընթերցման ավարտումից հետո, ուսուցիչն ստուգում
ե, վոր իմանա, բոլորն ել հասկացան պատմվածքի բովանդա-
կութիւնը, թե վոչ: Ստուգումը կատարվում ե հարցերի
միջոցով (5 րոպե):

4. Այդ բոլորից հետո ուսուցիչն ինքը կարդում ե պատ-
մվածքը: Պատմվածքը կարդացվում ե պարզ և հասկանալի
ձևով, միջակ աշակերտի ընթերցման արագութեան տեմպե-
րով: Աշակերտները ուշադիր լսում են ընթերցումը (2-3
րոպե):

5. Նույն պատմվածքն առաջարկվում ե աշակերտներից
մեկին կարդալ ամբողջովին: Ընթերցման ընթացքում աշա-
կերտները հետևում են իրենց գրքերի վրա: Ուսուցիչն ուշա-
դրութեամբ հետևում ե ընթերցման ընթացքին և անհրա-
ժեշտ դեպքում մացնում ե ուղղումներ: Կարելի յե կարդա-
ցնել տալ 3-4 աշակերտների: Կարդացնել տալ անհրաժեշտ
ե՝ լավ, միջակ և թույլ աշակերտների (10 րոպե):

6. Ընթերցումից հետո ուսուցիչն առաջարկում ե յերե-
խաներին իրենց տետրներում կարգացածի վերաբերյալ պատ-
կերներ նկարել: Նկարչութեան ժամանակ աշակերտներն
կենքերը հարկում են գրքից և յերբեմն կարդում պատմվածքը: Նկար-
ողավում են գրքից և յերբեմն կարդում պատմվածքը: Նկար-
չութիւնից առաջ ուսուցիչը պարզ բացատրում ե՝ վորտեղ
նկարել, ի՞նչ մեծութիւն պիտի ունենա նկարը, և ինչպիսի
մատիտով պիտի նկարել: Նկարչութիւնից առաջ ուսուցիչը
մի անգամ ել պարզաբանում ե պատմվածքի բովանդակու-
թիւնը, վորպեսզի նկարը լիովին արտահայտի պատմվածքի
իմաստը, համապատասխանի նրա բովանդակութեանը և չը-
բարդացնի աշակերտի աշխատանքը:

7. Աշակերտների աշխատանքի տեմպերը տարբեր կլի-
նեն. միեւնիսը շուտ կվերջացնեն, մյուսները՝ ուշ: Վորպես-
զի շուտ վերջացողները պարապ չմնան, ուսուցիչը ստու-
գում ե նրանց ընթերցման տեխնիկան—հերթով կարդաց-
նել ե տալիս նրանց:

8. Յեզբ բոլոր աշակերտները ավարտում են նկարները, ուսուցիչը համառոտ գրույց և ունենում նկարների մասին: Այդ գրույցի նպատակն է ստուգել նկարների հաջող կատարումը, թե վերադարձի հաջողությամբ նկարներն արտահայտում են պատմվածքի միտքն ու բովանդակությունը, և ել ավելի ամրապնդելու աշակերտների մեջ կարգացածի միտքը: (6, 7 և 8 կետերը տեղի ունեն 15-17 բույս):

9. Հետագա աշխատանքը տարվում է բառերի կազմություն հետ ծանոթացնելու վրա, ստղագրածի կանոնների հետ կապելով: Ուսուցիչը վերցնում է նախորդ պատրաստած բառատոմսերը: Բառերը անհրաժեշտորեն վերցրած պիտի լինեն կարգացած պատմվածքից: Ուսուցիչը հերթով վերցնում է առաջին պատահած բառատոմսը, բարձրացնում է վեր աշակերտների դեմ, և առաջարկում է արտասանել բառը: Այդ նախապատրաստական վարժությունները ստղագրածի շուրջը, տեղում են 10 բույս:

10. Դրանից հետո վարժություններ են կատարվում բառերի վանկման շուրջը (ի նկատի ունենալով, վոր աշակերտները գրավորի ժամանակ բառերի ստղագրածի մեջ դժվարություններ են կրում): Աշակերտները ստանում են մի մի կույտ վանկերի տոմսեր: Մի շարք վանկեր կարմիր գույնով են գրված, մյուսները՝ սև: Առաջարկվում է վերցնել կարմիր վանկը և նրա շարունակություն վրա գնել սևը: Ստացվում են տարբեր բառեր միևնույն վանկերով: Ստացված բառերը մանուկները արտագրում են իրենց սեռերի մեջ սյունակներով և ընդգծում են կարմիր վանկը: Այդ վարժություններով աշակերտների ուղղորդությունը կենտրոնացվում է վորոշ վանկերի վրա, վորպես բառի մասերի: Բառերի արտագրության ժամանակ ուսուցիչը շրջում է աշակերտների մեջ և հսկում գրավորի ճշտության վրա (20 բույս):

11. Կազմակերպվում է բառակազմության խաղ (վանկերի գուշակություն): Ուսուցիչն արտասանում է մի վորեկ վանկ, աշակերտները շտապ պիտի լրացնեն բառը (10 բույս):

12. 5 բույսի մեջ, մինչև զանգի տալը, ուսուցիչը անային աշխատանք է տալիս աշակերտներին և բացատրում է, թե ինչպես պիտի կատարեն այն: (5 բույս):

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ 5-ՐԴ ԽՄԲՈՒՄ:

(դասին տրվում է 3 ժամ):

Թե մասն—ծանոթություն գոյական անվան հետ, վորպես մի բառի, վորը ցույց է տալիս առարկայի անուն (իր, մարդիկ, և կենդանիներ, բնություն, յերևույթներ, իրադարձություններ,—առհասարակ այն բոլորը, վորոնց մասին կարելի չէ հարցնել՝ ով կամ ինչ):

Մասունք բանիների հետ աշակերտներին ծանոթացնելը, մեր նոր ծրագրով, տարվում է սինտակսիսական գիտելիքների հիման վրա, այսինքն՝ ամբողջական, ավարտված խոսակցության—մտքի արտահայտության՝ անալիզի հիման վրա: Մասունք բանիների ուսուցումը սկսվում է գոյական անունով, վորպես խոսքի մի մասը, վոր մանուկների յերևույթության մեջ ավելի կոնկրետացած է և իր մշակման ընթացքում առանձին դժվարությունների չի հանդիպում:

Մանուկներին մասունք բանիների մասին ծանոթություն տալու դասի ընթացքը վորոշվում է հետևյալ սխեմայով, վորը նախատեսում է իր աշխատանքների մեջ 7 ետապ.—

1-ին ետապ—նյութի կազակերպումը դիտողության համար:

2-րդ ետապ—առարկայի անուն ցույց տվող բառերի ընտրությունը (այս բառի ամեալայն մտքով):

3-րդ ետապ—ընտրած բառերի անալիզը՝ ըստ իմաստի: (նրանց նշանակությունը):

4-րդ ետապ—յեզրակացություն՝ մասունք բանիներից վորին է պատկանում բառը ըստ յուր իմաստի:

5-րդ ետապ—Տվյալ մասունք բանիի անալիզը ըստ իր ձևի, այսինքն, նախադասության մեջ մյուս բառերի հետ ունեցած տարբեր կապերի շնորհիվ ընդունած փոփոխական ձևերի:

6-րդ ետապ—յեզրակացություն վերջավորությունների փոփոխության մասին, վոր ընտրողում է այս կամ այն մասունք բանին:

7-րդ ետապ—մասունք բանիների ձևական կողմի ավելի մանրամասն ուսումնասիրություն:

Առաջին ետապը հանդիսանում է մասունք բանիի ուսումնասիրության ամբողջ ընթացքի հիմքը, ուստի նյութի նասիրության ամբողջ ընթացքի մոտենալ առանձին հոգալից կազմակերպման հարցին պիտի մոտենալ առանձին հոգատարությամբ: Այդպես կազմելով նյութերը, վորը գոյականի

ցերին, կոչվում են գոյական անուններ: „Այն յեղրափակումը, այն բնորոշումը, հիմնավորված այն բանի վրա, վոր ավելի շատ սովորական է, կամ վոր հաճախ աչքի յե ընկնում“ (Աենին) կհանդիսանա միանգամային մատչելի 5-րդ տարվա սևուցման յերեխաների համար:

Այստեղ հարկավոր է բացատրել, վոր գոյական անունները լինում են:—Նյութական՝ առարկայի անուն ցույց տվող բառեր, և վերացական՝ յերևույթների անուն ցույց տվող բառեր (ծ. թ.):

Անցնենք գոյականների անալիզին՝ ձևի փոփոխության տեսակետից (աշխատանքի 5-րդ ետապ): Դուրս ենք գրում մեր մայրամեկյան տոնակատարության նկարագրությունից միատեսակ բառերը, վորոնք տարբեր կապակցության մեջ են գտնվում մյուս բառերի հետ:—Հետևազորք—հետևազորքի, գրոշներ-գրոշների, գրոշների, պիոներների—պիոներների, գործարան—գործարանից և այլն:

„Ինչո՞ւ միևնույն բառերը արտասանում և գրում ենք տարբեր ձևերով: Կարելի չէ ասել այսպես. „հետևազորք հետևից գնում է թնդանոթածիզ գործը“: Հետևազորք բառի համար ի՞նչ հարց ենք տալիս այս նախադասության մեջ. „այս հետևազորք է“: Իսկ ի՞նչ հարց ենք տալիս հետևազորքի բառի համար հետևյալ նախադասության մեջ. „Հետևազորքի հետևից գնում է թնդանոթածիզ գործը“, և այլն:

Այսպիսով մանուկների համար պարզվում է, վոր նախադասության մեջ բառերի հետ տարբեր կապով կապակցված գոյականները գործ են ածվում տարբեր ձևերով, և վոր նախադասության մեջ բառերի հետ տարբեր կապով կապակցված գոյականները պատասխանում են տարբեր հարցերի:—Ինչ, ինչի, ինչից, ինչով . . . ով, ում, ումից . . . և այլն:

Այս դիտողություններից հետևում է, վոր մանուկները յեղրակացություն են դուրս բերում, թե՛ նախադասության մեջ բառերի հետ տարբեր կապով կապակցված գոյականները փոփոխում են իրենց վերջավորությանները (աշխատանքի 6-րդ ետապ): Հետագայում այս յեղրակացությունը պիտի խորանա գոյականների հոլովման ձևերի ավելի մանրամասն ուսումնասիրությամբ (տես 7-րդ ետապ):

Այս ետապում աշխատանքը տարվում է հետևյալ ձևով:—
1) Բերվում են ամբողջ նախադասություններով որինակներ, ուր միևնույն գոյական անունը կրկնվելու յե բոլոր հոլովներով (որինակ.—„Աշխատանքը հնում համարվում էր մի ծանր և նախատելի բեռ: Սոցիալիստական հասարակա-կարգի մեջ աշխատանքին բոլորովին այլ մոտեցում ունեն: Աշխատանքից վո՞չ միայն չենք խուսափում, այլ և պարծենում ենք աշխատանքով: Աշխատանքում (աշխատանքի մեջ) մենք տեսնում ենք պատվի, փառքի, հերոսության գործ): 2) Տվյալ որինակներից դուրս ենք գրում առանձին սյունյակներով գոյական անունները և կցում նրանց համապատասխան հարցերը:—

Ի՞նչ—Աշխատանք:

Ի՞նչին—Աշխատանքին:

Ի՞նչից—Աշխատանքից:

Ի՞նչով—Աշխատանքով:

Ի՞նչում—Աշխատանքում:


3) Դուրս գրված գոյականների վերջավորությունները ստանձնացնում ենք (աշխատանք—ին, աշխատանքից . . .):

4) Տալիս ենք տերմինը—„հոլովումն“ (նախադասության մեջ բառերի հետ տարբեր կապով կապակցված գոյականների վերջավորության փոփոխությունը) և „հոլովներ“ (գոյականի վերջավորության յուրաքանչյուր առանձին փոփոխությունը կոչվում է „հոլով“,—ուղղական, տրական և այլն): 5) Տրվում են գոյականների 3 հիմնական հոլովումների որինակներ՝

ա) Աշխատանք, սեղան, դաշտ, հերոս . . . բ) քամի, աղավիթ, զարի, ջորի . . . գ) զարուն, արյուն, մուկն, գառն . . . (թյուն վերջացող բառեր, ժամանակ ցույց տվող բառեր և այլն: Հետագայում անցնել մնացած հոլովումները (հայր, մայր, յեղբայր . . . քույր, կին տեր . . .):

Ինքնին հասկանալի չէ, վոր գոյականների հոլովման ձևերի ուսումնասիրությամբ չի կարող պարփակվել մի դասի մեջ, այլ ատոմսանաբար, կապելով ընդհանրապես գոյական անունները լեզվի դասերի հետ ընթերցման և խոսակցական լեզվի դարգացման աշխատանքների ընթացքում:

Ուսուցիչները թարգմանեց՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0239549



1579

907

34-K
Ca1000

2081

2081